

ՆԿԱՐԱԳԻՐ

առաջարկվող ապրանքի ամբողջական

Հակոբ Յիկյան Արմենի ԱԶ-ն ԵՔ-ԷԱՃԱՊՁԲ-26/158 ծածկագրով կազմակերպված Էլեկտրոնային աճուրդին մասնակցելու շրջանակում ներկայացնում է իր կողմից առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը

Չափաբաժնի համար	Առաջարկվող ապրանքի		
	ապրանքային նշանը	արտադրողի անվանումը	տեխնիկական բնութագիրը
1	Չինաստան	Չինաստան	<p>Գիտելիքի, գրի և դպրության օրվան նվիրված Նուբարաշեն վարչական շրջանի 1-ին դասարանցիներին նվիրելու համար անհրաժեշտ է ձեռք բերել 160 հատ դպրոցական պայուսակ համալրված գրենական պիտույքներով՝ յուրաքանչյուրը հետևյալ պարունակությամբ. Պայուսակ դպրոցական՝ պատրաստված բարձրորակ, չթրջվող կտորից, Էկոլոգիապես մաքուր, ամուր, խիտ հումքով՝ 100% պոլիէսթեր, գերծ տարատեսակ քիմիական ներկանյութերի հոտերից, մեջքի հատվածում օրթոպեդիկ կառուցվածքով, 30-45սմ լայնությամբ և 40-45սմ բարձրությամբ, հարմարեցված բռնակով և ուսագոտիով: Ուսագոտու լայնքը մոտ 5 սմ՝ պատրաստված հատուկ հարմարավետ փափուկ ներդիրով, որի երկարությունը հնարավոր լինի կառավարել: Պայուսակը ունենա առնվազն 2 առանձին փակվող դարակներ, բարձր որակի շղթայով՝ գլխիկը մետաղական: Հեղուկի շշի համար աջ և ձախ կողային հատվածներում ունենա հատուկ գրպաններ՝ շիշը տեղերում ամրացնելու համար նախատեսված ինքնակաջուն կապիչներով: Պայուսակի ներսում նախատեսված լինի շղթայով գրպանիկ՝ մանր իրերի համար,</p>

առնվազն 15x20սմ, պայուսակի առջևի մասում նախատեսված լինի շղթայով դարակ՝ առնվազն 30x30սմ չափսի: Տղաների պայուսակների գերակշռող գույնը լինի կապույտ, սև կամ մոխրագույն, աղջիկներինը՝ վարդագույն և մանուշակագույն: Պայուսակների արտաքին տեսքը, գույները և առանձին քանակները նախատեսված տղաների և աղջիկների համար համաձայնեցնել պատվիրատուի հետ: Մաթեմատիկայի և մայրենի լեզվի աշխատանքային տետրեր՝ յուրաքանչյուրից առնվազն 3-4 հատ, ԿԳՄՍ նախարարության կողմից երաշխավորված: Քանակությունը և ուսումնական դասընթացի նյութերը համապատասխանեցնել տվյալ ուսումնական տարվա ծրագրին: Գրիչ - 2հատ, կապույտ գույնի, գնդիկավոր, փականով, առնվազն 14-15սմ երկարությամբ, ռետինե կամ սիլիկոնե բռնակով, առնվազն 07մմ սայրով: Հասարակ մատիտ - 1 հատ, երկարությունը՝ նվազագույնը 18սմ, փափկությունը՝ HB: Սրիչ- 1 հատ, աղբամանը շարժական կափարիչով, առնվազն 2 բնիկով՝ լայն և նեղ, պլաստմասե: Ռետին -1 հատ, նվազագույնը 4x3x1,5սմ, Էկոլոգիապես մաքուր ու փափուկ հումքից պատրաստված, յուրաքանչյուրը փաթեթավորված: Քանոն- 1 հատ փայտե կամ պլաստմասե, ուղիղ գծաբաժանումներով, հարթ եզրերով, լավ մշակված և հղկված, թեթև լաքապատ, երկկողմանի գծանշումներով, երկարությունը՝ առնվազն 30 սմ: Նկարչական ալբոմ - 1 հատ, առնվազն 24 սպիտակ և հարթ թերթերից բաղկացած, հաստ ստվարաթղթե, նկարազարդ կազմով: Գունավոր թուղթ - 1 հատ, առնվազն 18 հաստ, որակյալ, երկկողմանի թերթից բաղկացած, հաստ ստվարաթղթե, նկարազարդ կազմով: Գունավոր մատիտներ - 1 տուփ, առնվազն 24 գույնի /ոչ երկկողմանի/, 6 անկյուն կամ եռանկյուն կտրվածքով, մատիտների տուփը լինի հաստ ստվարաթղթից, մատիտների երկարությունը՝ նվազագույնը 18սմ, փափկությունը՝ HB, պատրաստված Էկոլոգիապես մաքուր հումքից: Գունավոր գրիչ - 6 գույնի գրիչներից բաղկացած, տուփով: նվազագույնը 20սմ երկարությամբ, 12սմ լայնությամբ: Մկրատ - 1հատ, գունավոր, կլորացված ծայրերով, նախատեսված թուղթ կտրելու համար: Գրչատուփ - 1հատ, պատրաստված

			<p>ամուր նկարագարդ կտորից, որակյալ շղթայով: Ամբողջ ապրանքը մատակարարի կողմից պետք է մատակարարվի պատվիրատուին: Մատակարարումը և բեռնաթափումը նշված հասցե պետք է կատարվի մատակարարի կողմից: Տեսականին պետք է նախապես համաձայնեցվի պատվիրատուի հետ: Տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ապրանքները ենթակա են ետ վերադարձման:</p>
--	--	--	--

ПОЛНОЕ ОПИСАНИЕ

предлагаемого товара

ИП Акоп Цликян Арменович в качестве участника в рамках участия в электронном аукционе под кодом ԵՔ-ԷԱՃԱՊՁԲ-26/158
ниже представляет полное описание предлагаемого им товара.

Номер лота	Предлагаемый товар		
	товарный знак	наименование производителя	технические характеристики
1			